

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

**ՀԱՅԵՐԻՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ**  
ԵՒՐԱԿԱՑՈՅՑ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՄԱՆՈՅ. — Անանիա Հիրակացւոյն ժամանակագրութիւնը արդէն ծանօթ էր նոր Հայկազեան Բառարանի հեղինակներուն, որոնք բառաբաղած են զայն՝ Շիր քրն. Համառոտազրութեամբ։ Հրատարակուած է չ. Արքիսեանի ձեռքով՝ Վենետիկ 1904։ Հրատարակիշը սակայն բոլորպին համոզւած է ըլլալով թէ զիրը Շիրակացւոյն կը պատկանի՝ վերնազրը կը զնէ «Անանուն ժամանակագրութիւն Խմբագիր յօրինեալ յէ գարու»։ Այս գրուածքին մէջ կը գտնեմ հետեւեալ չորս նոր բառեր՝ որոնց յունարէնէ փոխառեալ ձեւեր են։

### 1. Անափորայ

Եւ գրեցին անափորայ առ թագաւորն, կոչեցիալ ի մաւորութիւն ինքեանց (էջ 77)։

Եւ արարեալ անփորայ (այլ ձեռ, տեսափորայ) առ թագաւորն կոստանդին, աղաւցին զի եղիցի միաւորութիւն Հռովմայեցւցն և կոստանդնուպօլսեցւցն (էջ 78)։

== յն. ճնաչօրգա «զիմումն բարձրագոյն իշխանութեան, աղերսագիր»։

### 2. Այսթիլի

Եւ պատմէ զայս Փիղոցրոս՝ յերկորդում ատթիւգոյն... որպէս պատմէ Պատեփատոս յառաջնում ատթիւգոյն... զոր Փիղոցրոսն պատմէ յերկորդում ատթիւգն (էջ 33)։

== յն. Առջև, Առջօս բառն է, որ կը նշանակէ «ատտիկեցի, ատտիկեան» և

դրուած է նաև իրը խորագիր Փիլոցրոսպի, Փանողեմոսի և ուրիշներու պատմական երկերուն, իրը «Ատտիկեան Պատմութիւն, Պատմուկթիւն Ատտիկէր»։

### 3-4 Ղիմփսկոս, Բիպողիմփսկոս

Բան որ կրկին էր յօրինակին և եւթանասունը թողին, զայն Ովրիգենէս աստեղը նշանակեաց և ուր պակասէր և յաւելուին, յորինիս արար, որոյ եւթանասունը յանձնէ եղին։ Խակ ուր զանազանցին զրանն դիմեխակոս է, հիպողիմեխիսկոս եղին։ Մին ատտիկեցի նշան է, և միւսն բժշկաց (էջ 47)։

Ըստ իս «զիմփսկոս է, հիպողիմփսկոս եղին» բառերը անյարմար են. պէտք է ուղղել «զիմփսկոս և հիպողիմփսկոս եղին»։

Խնչպէս Անանիայի բացատրութենէն Կ'երնայ, ստորագծեալ երեք բառերը յօյն մեկնիշներու կողմէ հնարուած պայմանական նշաններ էին՝ Ս. Գրքի թարգմանութեան զանազան պարագաները նշանակեւու համար։ Յորելին շամփրածն նշան մ'էր (տես նշի)։ Դիմեխիսկոս և հիպողիմփսկոս մտած չեն բառարաններու մէջ. սուաշինը յն. Լիյոնոսօս բառն է, որ կը նշանակէ «երիզ, ժապաւէն», թոշուն բրունելու ցանց, վէրըը պատելու խծուն»։ Ակէ կազմուած է նուօնախցիրով Ուոլդյունօսօս « Անթաճապաւէն », որ թէն կը պակի Բայլլյուի յունարէն հոյակապ բառարանին մէջ, բայց թէ՝ ստուգարանութեան և թէ հայերէն տառադառութեան միջոցով դիւրաւ կը վերականգուի։

## ԱԲՐԱՀԱՄ ԿՐԵՏԱՑԻՈՑ ՄԵջ

(Տա. Վերշպ. 1870)

## 1. Ասղարան

Պատուական և ծանր խաչեր բանած ասղարան և կարած ի վերայ հմիփորունքն (էջ 37):

Կը նշանակէ «ասեղնազորդուած», առեղով բանուած»: Կազմուած է ասեղ և բանի բառերէն:

## 2. Դիմչիւեց

Եւ ունին ի ձեռս իւրեանց միշտ նաւաս զմշխեայ երկաթէ՝ արծաթապատ կոթով (էջ 44):

Դամաց պր. մէ՛ ոյակ «կացին» բառն է, որ գործածական է ուամկակն լեզուին մէջ: Իսկ դմշխեայ ուն զայ արար. շահա Դեմէօց «Դամասկոս» բառէն: Նշանաւոր են Դամասկոսի թուրքերը, հմտուածանաւոր մատան: Բառան. մամաս «ընտիր պողպատեած թուրք»: արաբերէն ալ կ'ըսուի շահա Ճեմէօց «Դամասկոսան, Դամասկոսի յատուկ (թուրք, լալ են», ինչպէս և Քրանս. մամաս «զմշխեայ, միսեալ պողպատովչ», մամաս «պողպատը միսել Դամասկոսն ձեռվ»:

## 3. Զեկ

Ալդ՝ զեկ լիցի սիրելութեան ձերում, ու ցանկալիք հոգույս, զի... զրեալ ծանուցի համառուապէս... (էջ 93):

Ալպէս կը սկսի Ալբահամ կաթուուիկուսի կնողակը՝ որ հրատարակուուած է Գամամագրութեան իրը շարունակութիւնն. կը համապատասխանէ սովորական «Գիտութիւն լիցի ձեզ»... գարծուածին: Ըստ այսմ զիկ կը նշանակէ «գիտութիւն» և կազմուած է զեկուցանել «ծանուցանել» բայէն:

## 4. Թեպուր

Ունէին ի զուսիս իւրեանց ճղայն, որպէս զագի ազադաղին, որպէս և էր իսկ թէպուր ազադաղեաց (էջ 43):

Եւ անդ ի ծայրս և ի մէջս ճղային թէպուր (էջ 44):

Նման նետից զոր շինեն զպատուանդան թէպուրի՝ որպէս թզաշափ (էջ 44):

Հարեալ ի կերպ ճակատին թէպուր և թէպուրի տակն՝ ի վեր բան զարուին (կարգա զարուին = տճկ. տարզ «փաթթոց») մնձ ինծորի չափ արծաթէ քունտմի (էջ 72):

Այս բոլորին մէջ թէպուր կը նշանակէ «փետուր»: աւելի հինէն ունինց արդէն թէպուրի Շնորհ. առակ. կը ծագի նոյն փետորը բառէն տեղափոխութեամբ՝ ու անցած փ-ի տեղ և փ անցած տ-ի տեղ, սակայն ձայներու աստիճանի համապատասխանութեամբ:

## 5. Խօսացտէր

Խանը, սուլթանը, միրզէր և միրսոֆիր, վէրիւր և վէզիրը, շէխիւրամբ և շէխը, մօլապաշիր և մօլայը, բալանթարը և մէլլիքը, կողմնապիտը և կուսակալը, այսուեր և կէտիուտայը, խօսացտէրը և տօլվաթաւորը գումարեալ ժողովեցն (էջ 41):

Կը նշանակէ «իշխանաւոր, մհծաւոր», ինչպէս ցոյց կու տան բառին հետ գուռած բազմաթիւ պաշտօնեաներու անունները:

## 6. Կատաղունիք

Այլ և ի կատաղունիսն ի վեր՝ յորում կանչին այր մարզիկը՝ յորժամ հանդիպին ի յանապատն, էր քակեալ և աւերեալ. յորմէ վաղվաղակի հտու գտանել հիւս մի և փայտ և տախտակ և տուեալ զգինս հիւսոյն և ճարտարապեսին, հրամացեցի վերով շինե (էջ 76):

Կուսանաց աննապատին մէջ այրերուն յատկացուած տեղն է, այլուստ բառ ինձ անձանօթ է: կը յիշեցնէ յն. ռատչացայուն «իջևան, հիւրանոց, բնակարան»:

## 7. Հացուր

Ի ծաղկաւէտ և ի հացուս գաւառն Շիշակվան՝ շինեաց զլինի ի զահոյս թագաւորութեան իւրում (էջ 101):

Կը նշանակէ «հացաւէտ, հացաշատ».

տարրեր է հացուս թուզ. Գ. 14, «ուր հացի ծառեր շատ կան»:

### 8. Ալետաղ

Եւ յետ տեսանելոյն մեր զայն ամենայն, դարձաց ի մետաղակ մեր՝ որ էր հեռագոյն ի տեղուջէ յայնմանէ, ուր խառնի Երասխն ընդ կուռ գետոյն, իրեք ժամի մերը ճանապարհ, զի կամուրջն Երասխայ ի մէջ բանակին էր և կամուրջն կուռ գետոյն ի ներքոյ բան զրանակն. իսկ մեր ի վերի կողմն բանակին (էջ 30):

Եւ ապա ասաց. «Ալուրախաս են, զնացն, տուաւ արա»: և ելեալ զնացինց ի մետաղու դիշերով (էջ 34):

Գնացինք Երևանայ միրզայց վրանն և չնորհաւորդցաց զպայրամ իրեանց, և ապա անցեալ զնացինք ի մետաղու մեր սեպանչանաւով և փառաւորելով զԱստուած (էջ 50):

Եւ ի զիշերի թ ժամին արձակեալ զնացինք ի մետաղու մեր մեծաւ ուրախութեամբ (էջ 86):

Այս բոլոր օրինակներուն մէջ մետաղ կը նշանակէ «օթևան, իջևան»: բայց թէ ինչ ճամրով հասած է այս նշանակութեան՝ անյայտ է:

### 9. Ալորուսն

Քանզի բատ ասելոցն երկուս զրակալս ունէին, մինն երկար և միւսն կարճ, զի յորժամ հանդիպէր վարդապետ և կամ բահանայ, և թէ կարճահասակ լինէր, զրարձր զրակալն զնէին յատեան, և թէ երկար լինէր, զկարճն զնէին: Եւ այնպէս ծաղր և կատակ առնէին և ծիծաղ, մորուելով և հեզնելով զնոսաւ բարկացուցին զարարիչն Աստուած (էջ 104):

Թէկ մորու «յիմար» բառէն ածանցուած է, բայց կը նշանակէ «ծաղրել, վրան ինդղալ», ինչպէս կ'երևայ տեղէն և հոմանիշ հեղեղէ մերին յարազրութենէն:

### 10. Ալմար

Եւ ի վերայ նաւճակաց տախտակ հասագոյն և փայտ շարեալ և պնտացուցեալ մամարաւ (էջ 30):

կը նշանակէ «զամ, ընեն» և փոխառեալ է արարա, յասա ուսմանթշէն. աւելի հինէն ունինց մամարազակ «ընեսազամ» Վըրդն. ծն. բայց արմատական մամար մեր յայտնուած չէր:

### 11. Նեղաննուուկ

Եւ անտի (եկար) ի խնծորեկ, որ է ի մէջ բարածեն լերանց մեծամեծաց և ունի անրա բարձրութիւն, և նեղաննուկ ճանապարհաւ իջանէր ի մէջ ձորոյն (էջ 74): Պէտք է կարգալ նեղաննուկ, երկու հոմանիշ բառերով բարդուած ձև մը՝ «նեղ, շատ նեղ» նշանակութեամբ. հմմտո յորդասաւ:

### 12. Շողլային

կը օղն ապականեալ և տեղն չողային և ջուրն պական և տաճկունը՝ որք են լակիր և լուննիք՝ վշտացուցանէին և տառապեցուցանէին զագգն մեր (էջ 66): կը նշանակէ «շող, տաց»:

### 13. Ունի

Եւ ի նոյն զիշերի մինչ չն էր լուսացեալ՝ արձակեաց և զուհիքն իւր, որք եկին և նորա ի տեսութիւն սուրբ իջման տեղոյ (էջ 15):

Լյ նստած տեղն խանին՝ ամառաթ շինեալ փայտաշէն և տանիսն տախտակամած. իսկ շրջապատ պարիսպն եղեգնեայ և ուշեաց տեղն եղեգնեայ, պարիսպն և բնակութիւնն (էջ 38):

Զի էր նստած տեղն խանին ամառաթ շինեալ փայտաշէն և տանիսն տախտակամած, իսկ շրջապատն եղեգնեայ, և իւր ուշեացն տեղն եղեգնեայ՝ պարիսպն և բնակութիւնն (էջ 95):

Մանօթ ունի մասնիկն է՝ որ յատուկ է ի բական բառերու. արդի լեզուին մէջ երբեմն կը գործածուի իրբու «էգ էակ, աղջիկ կամ կին» նշանակութեամբ, բայց միայն կատակով, և պաշտօնապէս լնդուն ուտած չէ: Զարմանալի է որ լիրետացոյն ժամանակէն արդէն այս մեռով զրականութեան բարձրացած է եղեր:

Հար.

Ճ. ԱձԱՌԽԵԱՆ